«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԳԻՐՔԸ
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔ

Հոդված 9. ~~Ոստիկանության ուսումնական հաստատության առկա ուսուցման ձևով սովորողների նկատմամբ խրախուսանքներ կիրառելու և նրանց կարգապահական տույժի ենթարկելու առանձնահատկությունները~~

«Ոստիկանության ուսումնական հաստատության առկա ուսուցման ձևով, իսկ բարձրագույն կրթության դեպքում՝ լրիվ բեռնվածությամբ, սովորողների նկատմամբ խրախուսանքներ կիրառելու և նրանց կարգապահական տույժի ենթարկելու առանձնահատկությունները»

1. ~~Ոստիկանության ուսումնական հաստատության առկա ուսուցման ձևով սովորողների նկատմամբ «Ոստիկանությունում ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 41-րդ հոդվածի 7-րդ մասով նախատեսված խրախուսանքները, ինչպես նաև նույն օրենքի 42-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված կարգապահական տույժերը կիրառվում են գրավոր հրամանով: Խրախուսանքները սովորողների նկատմամբ կիրառվում են ոստիկանության ուսումնական հաստատության միջին, ավագկամգլխավորխմբիպաշտոնգբաղեցնողծառայողիզեկուցագրիհիմանվրա, իսկկարգապահականտույժերը՝նաև կարգապահական խախտում կատարելու մեջ մեղադրվող սովորողի բացատրության հիման վրա:~~

«Ոստիկանության ուսումնական հաստատության առկա ուսուցման ձևով, իսկ բարձրագույն կրթության դեպքում՝ լրիվ բեռնվածությամբ, սովորողների նկատմամբ «Ոստիկանությունում ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 41-րդ հոդվածի 7-րդ մասով նախատեսված խրախուսանքները, ինչպես նաև նույն օրենքի 42-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված կարգապահական տույժերը կիրառվում են գրավոր հրամանով: Խրախուսանքները սովորողների նկատմամբ կիրառվում են ոստիկանության ուսումնական հաստատության միջին, ավագկամգլխավորխմբիպաշտոնգբաղեցնողծառայողիզեկուցագրիհիմանվրա, իսկկարգապահականտույժերը՝ նաև կարգապահական խախտում կատարելու մեջ մեղադրվող սովորողի բացատրության հիման վրա:»:

2. Հասարակական կարգի պահպանության միջոցառումներին մասնակցելու ընթացքում թույլ տված կարգապահական խախտումների համար սովորողների նկատմամբ կիրառված կարգապահական տույժերը և բարեխիղճ ծառայության համար հայտարարված խրախուսանքները հաշվառվում են սովորողի անձնական գործում, իսկ ոստիկանության ուսումնական հաստատության ներքին կանոնակարգի խախտման համար կիրառված կարգապահական տույժերը՝ սովորողի անձնական գործին կցվող «Սովորողի ծառայողական քարտում»:

3. Ոստիկանության ուսումնական հաստատությունն ավարտելուց և համապատասխան պաշտոնի նշանակվելուց հետո ծառայության ողջ ընթացքում «Սովորողի ծառայողական քարտում» գրանցված կարգապահական տույժերը չեն հաշվարկվում:

(9-րդ հոդվածը լրաց. 24.10.06 ՀՕ-170-Ն)